«մուլք-է խասս վա խալիս» — ملك خاص و خالص (հատուկ զուտ սեփականություն) արտահայտության հետ և ապա եզրակացնում, որ դրանք այն հողերն էին, որոնք ազատվում էին պետական հարկերից և որոնցից ստացվող ամբողջ ռենտա-հարկը պատկանում էր կալվածատիրոջը[25]: Առանձին գյուղերի, զանազան մուլքերի, այգիների և այլ կալվածների, այդ թվում հենց իր իսկ Պետրուշևսկու կողմից վկայակոչված Նախիջևանի խանության Շահբուզի մահալում գտնվող Հոռոմշին գյուղի երկու դանգի վաճառքին վերաբերող կալվածագրերում, առուծախի ամբողջ մանրամասնությունը արձանագրելուց հետո առհասարակ վերջում ավելացվում էր. «... և այս շարիաթական վաճառքով սույն մուլքը հիշյալ գնորդի սեփական անբաժանելի մուլքն է ու ապրանքը, և տերը կարող է տիրել նրան որպես իր մուլքերից մեկը»[26]:

Շարիաթական նոտարական այս ձևակերպումը, որն, ինչպես ասվեց, հիշվում է համարյա բոլոր մուլքային կալվածքներին վերաբերող կալվածագրերում, չի կարող հիմք ծառայել ենթադրելու, որ այդ մուլքերը ինչ-որ հատուկ մուլքեր էին, որոնք օգտվում էին մուաֆության իրավունքից և որոնց եկամուտներից պետությունը ոչ մի մաս չուներ: Ավելի քան անհիմն է կալվածագրերում կրկնվող այս արտահայտությունը նույնացնել «խալիսե» տերմինի հետ: Մեզ հանդիպած մի քանի վավերագրերում «խալիսե» տերմինը մուաֆության իրավունքից օգտվող մուլքերի իմաստ չի պարունակում: Ընդհակառակը, Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատության մեջ Երևանի խանության Գըրխբուլաղի մահալի Եղվարդ գյուղի մասին մի վկայությունից, ըստ որի XVII դարի վերջերում Երևանի խաները այդ գյուղը բռնագրավել էին որպես խալիսե (Ջամբռ, էջ 123), ինչպես նաև Թուման-է Նախջևանի Սիսաջանի մահալի Անգեղակոթ գյուղի վերաբերյալ մի վավերագրում եղած այն հիշատակությունից, ըստ որի այդ գյուղը նույն վիլայեթի խալիսեներից էր և ամեն տարի իր «մալոջհաթն» ու «վջուհաթը» պարտավոր էր տալ և Գորիսում հանձնել «նորին մեծության սարքարության պաշտոնյաներին», երևում է, որ այդ գյուղերի իրավական վիճակը ոչնչով չէր տարբերվում դիվանի գյուղերից[27]: Այս վավերագրի «Թուման-է Նախջևանի խալիսե» արտահայտությունը, ինչպես նաև մի շարք այլ վավերագրերում հանդիպող նման այլ արտահայտություններ իրավունք են տալիս ենթադրելու, որ խալիսե գյուղերի եկամուտները անմիջապես տնօրինվում էին տվյալ վիլայեթի ֆինանսական վարչության և խանի կողմից և այդքանով էին միայն տարբերվում դիվանի գյուղերից:

Սակայն, խալիսե գյուղերի թիվը XVI—XVII դարերում չափազանց սահմանափակ է եղել, ուստի և դրանց մասին վավերագրերում և սկզբնաղբյուրներում շատ քիչ է հիշված:

Պետք է ենթադրել, որ Սեֆևիներից հետո և հատկապես հետնադիրյան շրջանում, երբ պետական կամ «դիվանի» հողերը մնացին տեղական խաների տնօրինության տակ և փաստորեն նույնացան «խալիսեի» հետ, իսկ ավելի ուշ,

---

[25] Տե՛ս *И. П. Петрушевский* նշվ. աշխ., էջ 236—237:

[26] Передняя Азия в документах, кн. I, Тифлис, 1937, док. 32, 33.

[27] Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 69: رعایای انکلکوت خالصهٔ تومان تخچوان مالوجهات و وجوهات خود را بوصول رسانیده برده بودند که درقریهٔ گوریس تسلیم گما شتهٔ سرکار عالیجاه معظم الیه نمایند